



Թարմացվել է 3/15/21. Սույն թարմացումը տրամադրում է տեղեկություններ COVID-19-ի դեմ երեք պատվաստանյութերի մասին, որոնք այս պահին թույլատրված են Միացյալ Նահանգներում: Այդ պատվաստանյութերը պատրաստվում են Moderna-ի, Pfizer-ի և Janssen/Johnson & Johnson (J&J)-ի կողմից:

1. Ինչու՞ է պատվաստումը կարևոր:

Պատվաստումը հիվանդության կանխարգելման անվտանգ և արդյունավետ միջոց է: Պատվաստանյութերը տարեկան միլիոնավոր կյանքեր են փրկում: Երբ մենք պատվաստվում ենք, մենք ոչ միայն պաշտպանում ենք ինքներս մեզ, այլև մեր շրջապատին: Դուք կարող եք օգնել կանգնեցնել համավարակը՝ ստանալով COVID-19-ի դեմ պատվաստանյութը, երբ այն հասանելի դառնա ձեզ համար:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

2. Արդյո՞ք պետք է վճարեմ COVID-19 պատվաստանյութ ստանալու համար:

Ոչ: Եթե դուք ունեք ապահովագրություն, ձեր բժիշկը կամ դեղատունը ձեր ապահովագրական ընկերությունից կգանձի պատվաստանյութի վճարը: Առողջապահական ապահովագրություն չունեցող մարդիկ COVID-19 պատվաստանյութը կարող են անվճար ստանալ: Գրպանից դուրս վճարումներ չկան որևէ անձի համար:

3. COVID-19-ի պատվաստանյութը ստանալիս արդյո՞ք ինձ կհարցնեն իմ ներգաղթի կարգավիճակի մասին:

Ոչ: COVID-19 պատվաստանյութը տրվում է Լոս Անջելես Շրջանի բնակիչներին անվճար՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: COVID-ի պատվաստանյութը ստանալիս ձեզ չպետք է հարցնեն ձեր ներգաղթային կարգավիճակի մասին: Ձեր բժշկական տեղեկությունները գաղտնի են: Ձեր բժշկին չի թույլատրվում դրանք ներգաղթի հարցերով պաշտոնյաներին տրամադրել:

4. Ե՞րբ կարող եմ պատվաստանյութը ստանալ:

Նպատակն այն է, որ բոլորը կարողանան հեշտությամբ ստանալ COVID-19 պատվաստումը, հենց որ հասանելի լինեն մեծ քանակությամբ պատվաստանյութեր: Չնայած մատակարարումները սահմանափակ են, պատվաստանյութերը տարբեր ժամանակներում առաջարկվում են մարդկանց տարբեր խմբերի: Այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.gov) կայքը՝ տեսնելու, թե որ փուլում եք գտնվում, և երբ պատվաստանյութերը կառաջարկվեն յուրաքանչյուր փուլի համար: Դուք կարող եք նաև թարմացումներ ստանալ՝ գրանցվելով այս կայքի Հանրային Առողջապահության COVID-19 պատվաստանյութի էլ.փոստի տեղեկագրում:

5. Որտե՞ղ են կատարվում պատվաստումները:

Հանրային Առողջապահությունը և շրջանը, քաղաքը, համայնքը և առողջապահական գործընկերները աշխատում են միասին՝ տարբեր վայրերում՝ պատվաստելու իրավասու խմբում գտնվող անձանց:

Պատվաստանյութերը հասանելի են ԼԱ Շրջանի ավելի քան 600 պատվաստումների կայաններում. Դրանք ներառում են՝

- Պատվաստումների համար նախատեսված մեծ կայաններ, որոնք կոչվում են POD-եր (Point of Dispensing Sites) և հատուկ կենտրոններ
- Կլինիկաներ և Դաշնային Հավաստագրում Ունեցող Առողջապահական Կենտրոններ (FQHCs)
- Դեղատներ
- Որոշ աշխատավայրեր, ներառյալ՝ հիվանդանոցները
- Տարեց անձանց բնակության որոշ հաստատություններում և ծերանոցներ
- Պատվաստումների շարժական կայաններ





- Մասնագիտացված բուժքույրական խնամքի հաստատություններ (SNFs) և համատեղ ապրելու համար նախատեսված երկարաժամկետ խնամքի հաստատություններ, ինչպես օրինակ՝ ապրելու օժանդակ կենտրոնները
- Պատվաստումների հատուկ տարածքներ, որոնք ղեկավարում են Հանրային Առողջապահությունը և շրջանի, քաղաքի, համայնքի և առողջապահական գործընկերները

6. Ինչպե՞ս կարող եմ ժամադրվել պատվաստման համար:

Այցելեք VaccinateLACounty.com կայքը, սեղմեք <<Ինչպե՞ս ժամադրվել>> և հետևեք վեբ կայքի քայլերին: Հաշմանդամություն ունեցող կամ համակարգչին հասանելիություն չունեցող բնակիչները ժամադրվելու հարցում օգնության համար կարող են զանգահարել 1-833-540-0473 հեռախոսահամարով առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30 ընկած ժամանակահատվածում՝ շաբաթը 7 օր:

Կարող եք խոսել նաև ձեր մշտական առողջապահական ծառայությունների տրամադրողի հետ, քանի որ հնարավոր է՝ կարողանաք պատվաստվել իրենց հաստատություններից որևէ մեկում: Պատվաստում առաջարկող հաստատությունների և մատակարարների ցանկը հասանելի է VaccinateLACounty.com կայքում կամ սեղմելով [այստեղ](#):

7. Քանի՞ դեղաչափ COVID-19-ի դեմ պատվաստանյութ է ինձ անհրաժեշտ:

- J&J/Janssen պատվաստանյութի համար ձեզ անհրաժեշտ է մեկ դեղաչափ:
- Pfizer պատվաստանյութով պատվաստումը կատարվում է 2 դեղաչափով՝ 21 օր տարբերությամբ:
- Moderna պատվաստանյութով անհրաժեշտ է պատվաստել 2 դեղաչափով՝ 28 օր տարբերությամբ:
- Եթե դուք ուշանաք 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի 2-րդ դեղաչափը ստանալուց, ձեզ կհարկավորվի ստանալ նույն պատվաստանյութը:
- 3 պատվաստանյութերի դեպքում էլ դուք չեք համարվում ամբողջովին պատվաստված, եթե չի անցել 2 շաբաթ ժամանակ ձեր վերջին պատվաստումից հետո:
- Մենք դեռևս չգիտենք, թե որքան կտևի պատվաստանյութից պաշտպանությունը: Մա նշանակում է, որ մենք չգիտենք, թե արդյոք ձեզ ապագում անհրաժեշտ կլինի կրկին պատվաստվել:

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՄԱՍԻՆ

8. COVID-19-ի ԴԵՄ ՔԱՆԻ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐ ԿԱՆ

Ամբողջ աշխարհում մարդկանց վրա փորձարկվում են մոտ 50 պատվաստանյութեր COVID-19-ի դեմ: Առայժմ Միացյալ Նահանգներում թույլատրվում են հետևյալ երեք պատվաստանյութերը: Դրանք պատրաստվում են Pfizer-ի, Moderna-ի և Janssen-ի կողմից՝ ընկերություն, որը սեփականաշնորհված է Johnson & Johnson-ի կողմից:

9. Ինչպե՞ս եմ գործում պատվաստանյութերը:

Պատվաստանյութերն աշխատում են՝ պատրաստելով ձեր մարմնի բնական պաշտպանության համակարգը՝ ճանաչելու մանրէները և պայքարելու դրանց դեմ

- Որոշ պատվաստանյութեր պարունակում են մանրէի մահացած կամ թուլացած տարբերակներ:
- Մյուսները պարունակում են նյութեր, որոնք նման են մանրէի մասի:
- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը մարմնին սովորեցնում են սպիտակուցներ պատրաստել, որոնք նման են մանրէի մասի: (Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ինչպե՞ս եմ գործում COVID-19 դեմ պատվաստանյութերը» հարցը):

Երբ պատվաստվում եք, ձեր իմունային համակարգն արձագանքում է՝





Այն՝

- Ստեղծում է հակամարմիններ: Հակամարմինները իմունային համակարգի կողմից բնական ճանապարհով արտադրված սպիտակուցներ են հիվանդության դեմ պայքարելու համար:
- Պատրաստում է ձեր իմունային բջիջներին՝ հետագա վիրուսին արձագանքելուն:
- Հիշում է հիվանդությունը և դրա դեմ պայքարելու ձևը: Եթե պատվաստվելուց հետո դուք վարակվել եք մանրէով, ձեր իմունային համակարգը կարող է արագորեն ոչնչացնել նրան նախքան ձեր հիվանդանալը:

Ահա այս հանգամանքներն են այսքան արդյունավետ դարձնում պատվաստանյութերը: Հիվանդանալուց հետո հիվանդությունը բուժելու փոխարեն պատվաստանյութերը կարող են ի սկզբանե կանխել մեր հիվանդանալը:

10. Ինչպե՞ս են գործում COVID-19 -ի դեմ պատվաստանյութերը:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերից ոչ մեկը որևէ տարբերակով չի պարունակում COVID-19 առաջացնող վիրուսը: COVID-19-ի դեմ բոլոր 3 պատվաստանյութերը գործում են սովորեցնելով մեր բջիջներին ստեղծել անվնաս ցողունային սպիտակուցներ (պսականման ցողուններ COVID-19-ի վիրուսի մակերեսի վրա): Ցողունային սպիտակուցների ստեղծումը չի վնասում մեր բջիջները:

- Երբ մենք պատվաստվում ենք, ցողունային սպիտակուցները հայտնվում են մեր բջիջների մակերեսներին: Մեր իմունային համակարգը նկատում է դրանք և գիտի, որ նրանք այդտեղ պետք է չլինեն:
- Մեր մարմիններն արձագանքում են՝ կառուցելով իմունային արձագանք: Այն ստեղծում է հակամարմիններ, որոնք կարող են գործել COVID-19-ի վիրուսի ցողունային սպիտակուցի դեմ, և ստեղծում է իմունային բջիջներ: Սա մեզ կպաշտպանի, եթե հետագայում վարակվենք այդ վիրուսով:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերը տարբերվում են նրանով, թե ինչպես են սովորեցնում մեր բջիջներին ստեղծել ցողունային սպիտակուց

- Pfizer-ի կամ Moderna-ի կողմից պատրաստված պատվաստանյութերը կոչվում են mRNA պատվաստանյութեր: Messenger RNA (mRNA)-ն գենետիկական նյութ է, որը սովորեցնում է մեր մարմիններին՝ ինչպես ստեղծել սպիտակուց: Պատվաստանյութի բաղադրություն կազմող mRNA-ն փաթեթավորված է յուղոտ պղպղակներում (հայտնի որպես լիպիդային նանոմասնիկներ կամ LNPs): Երբ mRNA-ն ներթափանցում է մեր բջիջներ, այն հասնում է բջիջներին և սովորեցնում է՝ ինչպես ստեղծել ցողունային սպիտակուցների կրկնօրինակներ:
- J&J/Janssen-ի կողմից պատրաստված պատվաստանյութը կոչվում է վեկտորային պատվաստանյութ: Այն կազմված է <<վիրուսային վեկտորում>> ներառված գենետիկ հրահանգներից (DNA), որն օգտագործվում է DNA-ն մեր բջիջներ փոխադրելու համար (Վիրուսային վեկտորը հայտնի սառը վիրուսի անվտանգ տարբերակն է): Մեր բջիջները կարողում են գենետիկական նյութը և ստեղծում են mRNA, և այդ mRNA-ն սովորեցնում է մեր բջիջներին ստեղծել ցողունային սպիտակուց:

Կարող եք իմանալ ավելին և [Հասկանալ, թե ինչպես են գործում COVID-19-ի դեմ Պատվաստանյութերը](#) CDC վեբ կայքում:

11. Ի՞նչ է ներառված պատվաստանյութերում

Բաղադրիչների ամբողջական ցանկի համար, խնդրում ենք ընթերցել Պատվաստվողների և Խնամակալների համար նախատեսված յուրաքանչյուր պատվաստանյութի մասին Տեղեկությունների Թերթը՝ [Pfizer-BioNTech COVID-19-ի դեմ պատվաստանյութ](#), [Moderna COVID-19-ի դեմ](#)





[պատվաստանյութ](#), և [J&J/Janssen COVID-19-ի դեմ պատվաստանյութ](#): Պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում ձու, ժելատին, լատեքս կամ կոնսերվատներ:

12. Արդյո՞ք կարող եք վարակվել COVID-19-ով պատվաստանյութից:

Ոչ: Դուք չեք կարող վարակվել COVID-19-ով պատվաստանյութից: Բայց դուք կարող եք վարակված լինել նախքան պատվաստվելը և պատվաստվելուց հետո ձեզ մոտ ի հայտ գան ախտանիշներ: Ձեր վարակվելուց հետո կարող է պահանջվել մինչև 14 օր ախտանիշների ի հայտ գալու համար: Հնարավոր է վարակվել նաև պատվաստվելուց հետո, քանի որ ձեր մարմնից որոշ ժամանակ է պահանջվում իմունիտետ մշակելու համար, և, չնայած, որ պատվաստանյութերը բավականին արդյունավետ էին, դրանից որևէ մեկը 100%-անոց չէ:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում COVID-19-ի պատճառ հանդիացող վիրուսը: J&J/Janssen-ի պատվաստանյութի վիրուսային վեկտորը հայտնի սառը գրիպի անվնաս տարբերակն է: Այն չի կարող կրկնօրինակվել մեր բջիջներում կամ հիվանդության պատճառ դառնալ և այն որևէ կերպով չի կարող փոխել մեր ԴՆԹ-ն:

Երբեմն մարդիկ ունենում են ջերմություն կամ հոգնածության զգացողություն պատվաստվելուց հետո մոտ մեկ օր: Պատվաստումի հետևանքով տվյալ կողմնակի ազդեցությունները նորմալ են, և նշան են այն բանի, որ մարմինը կառուցում է իմունային համակարգ:

13. Որո՞նք են COVID-ի դեմ պատվաստանյութերի կողմնակի ազդեցությունները:

COVID-19-ի դեմ պատվաստանյութը ստանալուց հետո ձեզ մոտ կարող են դրսևորվել կողմնակի ազդեցություններ, որոնք նման են գրիպի կամ շինգլերի պատվաստանյութի հետևանքով դրսևորվող կողմնակի ազդեցություններին: Երկու դեղաչափից կազմված պատվաստանյութերի դեպքում կողմնակի ազդեցություններին ավելի հաճախ դրսևորվում են երկրորդ չափաբաժնից հետո: Այս կողմնակի ազդեցությունները կարող են ազդել ձեր առօրյա գործողությունների վրա, սակայն նրանք պետք է վերանան մեկ կամ երկու օրվա ընթացքում: Ոչ բոլորի մոտ են դրսևորվում կողմնակի ազդեցություններ: Կողմնակի ազդեցությունները կարող են ներառել

- Ջերմություն, դող կամ մկանային ցավեր
- Գլխացավ
- Հոգնածության զգացողություն
- Ձեռքի կարմրություն կամ ցավ

Կողմնակի ազդեցությունները նորմալ են և նշան են այն բանի, որ պատվաստանյութը գործում է: Այն ցույց է տալիս, որ ձեր մարմինը սովորում է պայքարել մանրէի դեմ և կառուցում է իմունիտետ: Ոչ բոլորի մոտ են դրսևորվում կողմնակի ազդեցություններ: Կարևոր է ստանալ երկրորդ դեղաչափը անգամ եթե ձեզ մոտ դրսևորվել են կողմնակի ազդեցություններ առաջին չափաբաժնից հետո, քանի դեռ ձեր բժիշկը կամ մատակարարը չեն ասել ձեզ չստանալ այն:

14. Ե՞րբ եմ ես համարվում ամբողջովին պատվաստված:

Մարդիկ համարվում են ամբողջովին պատվաստված

- 2 դեղաչափից կազմված պատվաստանյութի երկրորդ չափաբաժինը ստանալուց 2 շաբաթ անց (Pfizer կամ Moderna պատվաստանյութ), կամ
- Մեկ դեղաչափից կազմված պատվաստանյութը ստանալուց 2 շաբաթ անց (Johnson & Johnson/Janssen պատվաստանյութ)





Եթե պատվաստվելուց հետո դեռևս չի անցել 2 շաբաթ ժամանակ, կամ, եթե ձեզ դեռ անհրաժեշտ է ստանալ երկրորդ դեղաչափը, դուք ամբողջովին պաշտպանված ՉԵՔ: Շարունակեք իրականացնել բոլոր [կանխարգելիչ միջոցառումները](#) մինչև ամբողջովին պատվաստվելը:

15. Որքա՞ն լավ են գործում պատվաստանյութերը:

Պատվաստանյութերի ուսումնասիրությունների ընթացքում բոլոր 3 պատվաստանյութերը եղել են շատ արդյունավետ լուրջ հիվանդությունների կանխման, հոսպիտալացումների և մահերի հարցում: Դուք չեք կարող ուղղակիորեն համեմատել J&J/Janssen և mRNA պատվաստանյութերը, որովհետև

- Ուսումնասիրությունները կատարվել են տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում – հետևաբար համայնքներում վարակի մակարդակը և տեսակը, ինչպես նաև վիրուսային տեսակների քանակը տարբերվում է:
- Ուսումնասիրություններին մասնակցել են մարդկանց տարբեր խմբեր, ովքեր ունեն հիվանդության տարբեր նախապայմաններ
- Ուսումնասիրությունների ընթացքում ուսումնասիրվել են տարբեր դեպքեր, կողմնակի ազդեցություններ և վտանգավոր իրադարձություններ:

Լավագույն պատվաստանյութը նա է, որն առաջարկվում է ձեզ:

16. Արդյո՞ք պատվաստման հետևանքով իմ COVID-19-ի թեստը դրական կլինի:

Ոչ: Պատվաստանյութերի հետևանքով ձեր COVID-19-ի PCR-ի կամ հակազենի վիրուսային թեստի (քթի միջոցով թեստ), որը փնտրում է ընթացիկ COVID-19-ի վիրուսը, պատասխանը դրական չի լինի: Ձեր որոշ հակամարմինների թեստեր (արյան թեստ) կարող են լինել դրական: Դա այն պատճառով է, որ պատվաստանյութերի գործելու տարբերակներից մեկն է սովորեցնել ձեր մարմնին ստեղծել հակամարմիններ:

COVID-19-ի թեստերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս հանրային առողջապահության թեստավորումների վեբ կայքը ph.lacounty.gov/covidtests:

Ո՞վ ԿԱՐՈՂ Է ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

17. Եթե ես արդեն հիվանդացել եմ COVID-19-ով, արդյո՞ք ես պետք է պատվաստվեմ:

Այո: Ձեզ հարկավոր է պատվաստանյութը, նույնիսկ եթե դուք վարակվել եք COVID-19-ով: Մենք դեռ չգիտենք, թե որքան ժամանակ էք պաշտպանված լինելու COVID-19-ով վարակվելուց հետո, ուստի կարևոր է պատվաստվել՝ ձեր իմունիտետը բարձրացնելու համար: COVID-19-ով հիվանդանալուց հետո պատվաստանյութն ստանալն անվտանգ է, բայց պետք է սպասել մինչ ավարտվի ձեր մեկուսացման շրջանը: Դրա նպատակն այն է, որ պատվաստման այցի ժամանակ չվարակեք առողջապահական ոլորտի աշխատողներին և այլոց: Եթե դուք ունեցել եք մոնոկլոնալ հակամարմիններ կամ բուժվել եք, պետք է սպասեք 90 օր՝ նախքան COVID-19-ի դեմ պատվաստանյութ ստանալը:

18. Կարո՞ղ են երեխաները COVID-19 պատվաստանյութ ստանալ:

Ոչ: 16 տարեկանից ցածր մարդիկ այս պահին չեն կարող COVID-19-ի դեմ պատվաստանյութ ստանալ: Երեխաների մոտ այս պատվաստանյութերի օգտագործման վերաբերյալ դեռ բավարար տեղեկություններն չկան: 16 և 17 տարեկան անձինք կարող են ստանալ Pfizer պատվաստանյութը:





Moderna և J&J/Janssen պատվաստանյութերը նախատեսված է 18 և ավելի բարձր տարիքի մարդկանց համար:

19. Թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ կարո՞ղ են COVID-19 պատվաստանյութ ստանալ:

Այո: Թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ կարող են COVID-19-ով վարակվելու ավելի մեծ վտանգի ներքո գտնվել և ավելի մեծ հավանականությամբ ծանր կհիվանդանան: Նրանք կարող են պատվաստվել ցանկացած 3 պատվաստանյութերով, սակայն նրանց խորհուրդ է տրվում խոսել իրենց բժշկի հետ պատվաստման լավագույն ժամանակի վերաբերյալ: Պատվաստանյութերի հետազոտությունները ներառել են թույլ իմունային համակարգ ունեցող որոշ մարդկանց՝ ինչպիսիք են՝ քաղցկեղ և կայուն ՄԻԱՎ-ով հիվանդները, և նրանց մոտ դրսևորված կողմնակի ազդեցությունները չեն տարբերվել: Սակայն մենք չգիտենք, թե որքան լավ կգործեն պատվաստանյութերը թույլ իմունային համակարգ ունեցող մարդկանց վրա՝ նորմալ իմունային համակարգ ունեցող մարդկանց համեմատությամբ:

20. Ալերգիա ունեցող մարդիկ կարո՞ղ են COVID-19 պատվաստանյութ ստանալ:

Կախված է հետևյալից՝

- Մարդիկ, ովքեր ալերգիկ են այնպիսի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են՝ բերանով ընդունվող դեղորայքը, սնունդը, կենդանիները կամ ծաղկափոշին, կամ այն մարդիկ, ովքեր ընտանեկան ալերգիայի պատմություն ունեն, կարող են պատվաստվել:
- Բայց այն մարդիկ, ովքեր պատվաստանյութից ունեցել են ալերգիկ ռեակցիա, ներարկային թերապիա, պոլիէթիլենգլիկոլ (PEG) կամ պոլիսորբատ, պետք է խոսեն իրենց բժշկի հետ, որպեսզի որոշեն՝ արդյոք անվտանգ է նրանց պատվաստումը:
- Ցանկացած պատվաստանյութից կա լուրջ ալերգիկ ռեակցիայի փոքր վտանգ
- COVID-19-ի պատվաստանյութը ստանալուց հետո յուրաքանչյուր անձ հետազոտվում է ալերգիկ ռեակցիաների համար:

Ալերգիկ ռեակցիաների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է փոփոխվել: Անպայման ստուգեք ամենավերջին ուղեցույցը [COVID-19-ի Դեմ Պատվաստանյութերը և Ալերգիկ Ռեակցիաները](#) CDC վեբ կայքում և խոսեք ձեր բժշկի հետ:

21. Արդյո՞ք հղի կանայք կարող են պատվաստվել:

Այո: Հղի կանայք կարող են ընտրել այդ 3 պատվաստանյութերից մեկը, սակայն դա անձնական որոշում է, և նրանք կարող են ցանկանալ քննարկել դա իրենց բժշկի հետ:

- Հղի կանայք, ովքեր վարակվեն COVID-19-ով, ավելի մեծ հավանականությամբ կհիվանդանան: Նրանց մոտ կա հղիության ընթացքում բարդացումների ավելի մեծ հավանականություն, օրինակ՝ վաղաժամ ծննդաբերությունը:
- Հղիության ընթացքում COVID-19-ի դեմ պատվաստանյութերի անվտանգության վերաբերյալ կա սահմանափակ տեղեկատվություն, քանի որ հղի կանայք չեն ներգրավվել պատվաստանյութերի հետազոտություններում: Այնուամենայնիվ, հիմնվելով պատվաստանյութերի գործելու ձևի մասին մեր տեղեկությունների վրա, մասնագետները չեն կարծում, որ այն վտանգ է պարունակում:
 - Հղի կանայք ներգրավված չեն եղել հետադադարումներում, սակայն կենդանիների նկատմամբ կատարված հետազոտությունները չեն հայտնաբերել պատվաստանյութի անվտանգության հետ կապված որևէ խնդիր:
 - J&J/Janssen պատվաստանյութում միևնույն վեկտորը կիրառվել է հղի կանանց նկատմամբ մեկ այլ փորձարկման ժամանակ և հայտնաբերվել է, որ այն անվտանգ է և կնոջ և երեխայի համար:





- Շատ կանայք, ովքեր պատվաստավել են, գտնվում են վերահսկողության տակ և մինչև այժմ անվտանգության հետ կապված խնդիրներ չեն հայտնաբերվել:

22. Արդյո՞ք կերակրող կանայք կարող են պատվաստվել:

Այո: Կերակրող կանայք չեն ներգրավվել պատվաստանյութերի հետազոտություններում, հետևաբար չկան տեղեկություններ կերակրող կանանց համար COVID-19-ի դեմ պատվաստանյութերի անվտանգության, կամ կերակրվող նորածնի կամ կաթնարտադրության վրա պատվաստանյութերի ազդեցության վերաբերյալ: Այնուամենայնիվ, հիմնվելով պատվաստանյութերի գործելու ձևի մասին մեր տեղեկությունների վրա, դրանք վտանգ չեն պարունակում մոր և երեխայի համար: Կերակրող կանայք կարող են որոշել պատվաստվել:

ՊԱՇՏՊԱՆԵԼՈՎ ԻՆՁ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԻՆ

23. Ի՞նչ կլինի այն դեպքում, եթե պատվաստվելուց հետո ինձ մոտ ի հայտ գան COVID-19-ի ախտանիշներ:

Դուք պետք է թեստավորվեք և մնաք տանը և հեռու լինեք այլ անձանցից, եթե ձեզ մոտ առկա է՝

- 2 օրից ավել տևող կողմնակի ազդեցություններ պատվաստանյութից
- Ախտանիշներ, որոնք ի հայտ են եկել պատվաստումից 2 օր կամ ավել ժամանակ անց
- Հազ, շնչարգելություն, քթարտադրություն, կոկորդի ցավ կամ հոտի նոր կորուստ. այս ախտանիշները պատվաստանյութի կողմնակի ազդեցություններ ՉԵՆ:

Կարևոր է շարունակել վերահսկել COVID-19-ի ախտանիշները՝ անգամ, եթե պատվաստվել եք՝ հասկապես, եթե գտնվել եք հիվանդ մարդու շրջապատում:

24. Պե՞տք է գրիպի դեմ պատվաստվեմ:

Այո՝ Գրիպի դեմ պատվաստանյութը ձեզ պաշտպանում է միայն գրիպից, բայց դա առնվազն նշանակում է, որ ձեզ չի սպառնա միաժամանակ գրիպով և COVID-19-ով վարակվելու վտանգը: Մա կարող է ձեզ պաշտպանել ավելի ծանր հիվանդությունից: Եթե հավանական է, որ շուտով COVID-19 -ի դեմ պատվաստանյութ կստանաք, ձեր բժշկին հարցրեք գրիպի պատվաստանյութը ստանալու լավագույն ժամանակի մասին: Դա պայմանավորված է նրանով, որ COVID-19 պատվաստումը չպետք է կատարվի այլ պատվաստումներից 2 շաբաթվա ընթացքում:

25. Ինչու՞ է մեզ պետք պատվաստանյութը, եթե կարող ենք այլ բաներ անել, ինչպիսիք են՝ սոցիալական հեռավորություն պահպանելը և դիմակներ կրելը:

Մենք պետք է անենք այն, ինչ կարող ենք՝ համավարակը դադարեցնելու համար: Պատվաստանյութերը բարձրացնում են ձեր իմունային համակարգը, ուստի այն պատրաստ կլինի պայքարել վարակի դեմ, եթե ենթարկվեք ազդեցության: Այլ քայլերը, ինչպիսիք են դիմակները և սոցիալական հեռավորությունը, օգնում են նվազեցնել վիրուսի ազդեցության կամ տարածման հնարավորությունը: Միասին, այս գործիքներն առաջարկում են լավագույն պաշտպանությունը COVID-19-ից:

26. Ի՞նչ կարող եմ անել հիմա, որպեսզի պաշտպանվեմ COVID-19-ից, մինչև պատվաստանյութ ստանալու իմ հերթը գա:

Ձեզ և ուրիշներին պաշտպանելու համար հետևեք հետևյալ առաջարկություններին.

- Ծածկեք ձեր բերանն ու քիթը դիմակով, երբ այլոց շրջապատում եք:





- Խուսափեք մարդաշատ վայրերից և վատ օդափոխվող տարածքներից (ավելի ապահով են բացօթյա և լավ օդափոխվող տարածքները)
- Մյուսներից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեք:
- Հաճախ լվացեք ձեր ձեռքերը:

Տե՛ս [ձեր համար վտանգը նվազեցնելու](#) ուղեցույցը: Դուք դա պետք հետևեք ուղեցույցին նույնիսկ ամբողջովին պատվաստվելուց հետո:

27. Պատվաստվելուց հետո կարո՞ղ եմ դադարեցնել դիմակ կրելը:

Միայն որոշ դեպքերում: Ամբողջովին պատվաստվելուց հետո

- Կարող եք այցելել փակ տարածություններ, որտեղ կան ամբողջովին պատվաստված քիչ թվով մարդիկ առանց դիմակ կրելու կամ ֆիզիկական հեռավորություն պահպանելու:
- Կարող եք այցելել փակ տարածություններ մեկ այլ ընտանիքի անդամ հանդիսացող չպատվաստված անձանց հետ՝ առանց դիմակ կրելու կամ ֆիզիկական հեռավորություն պահպանելու այնքան ժամանակ, եթե այդ մարդկանցից որևէ մեկը կամ որևէ անձ, որը բնակվում է իրենց հետ գտնվում է COVID-19-ի հետևանքով լուրջ հիվանդանալու վտանգի ներքո:

Դուք պետք է շարունակեք քայլեր ձեռնարկել՝ [պաշտպանելու ձեզ](#) և մյուսներին բազմաթիվ իրավիճակներում, ինչպես օրինակ՝

- Հանրության մեջ գտնվելիս
- Մեկից ավելի այլ ընտանիքի անդամ հանդիսացող չպատվաստված անձանց հետ հավաքվելիս
- Այցելել չպատվաստված անձի, որը գտնվում է COVID-19-ի հետևանքով լուրջ հիվանդության բարձր վտանգի կամ մահվան վտանգի ներքո, կամ բնակվում է բարձր վտանգի ներքո գտնվող անձի հետ

Դուք պետք է շարունակեք խուսափել միջին թվով և մեծաթիվ հավաքներից:

28. Եթե ես պատվաստված եմ և շփվել եմ COVID-19-ով վարակված անձի հետ, արդյո՞ք պետք է կարանտին պահպանեմ:

Եթե չունեք ախտանիշներ և ամբողջովին [պատվաստված եք](#), ձեզնից չի պահանջվում կարանտին պահպանել կամ թեստ հանձնել (եթե չեք բնակվում համատեղ կացության վայրում, ինչպես օրինակ՝ ուղղիչ հաստատությունում կամ կալանավայրում կամ խմբակային տանը): Մակայն դուք պետք է 14 օրն շարունակ վերահսկեք ձեր առողջական վիճակը COVID-19-ի ախտանիշների համար և շարունակեք պաշտպանել ձեզ և մյուսներին:

